

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱՄՐԱՊՆՈՒՄԸ

ՌԱԴԻԿ ՄԻՐՋՈՑԱՆ

ՍՄԿԿ XXVI համագումարում խնդիր դրվեց ուժեղացնել տնտեսական պատասխանատվությունը և շահագրգռվածությունը պլանային առաջադրանքների ու պայմանագրային պարտավորությունների կատարման, տնտեսաշվարկի սկզբունքների ըստ ամենայնի կիրառման համար, Հատկապես պահանջվեց ճկատարելագործել մատակարարների և սպառողների, ինչպես նաև պատվիրատուների և կապալառուների տնտեսաշվարկային հարաբերությունների և փոխադարձ տնտեսական շահագրգռվածության ձևերը, պլանային առաջադրանքների և պայմանագրային պարտավորությունների կատարման համար նրանց պատասխանատվության ձևերը՝

... Ուժեղացնել պլանային առաջադրանքներն ու պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար, նյութական և ֆինանսական ռեսուրսները ոչ ռացիոնալ ծախսելու համար կիրառվող տնտեսական սանկցիաների ներգործությունը¹։

Ներկայումս արտադրողների և սպառողների շահերի միասնության ապահովման առաջնահերթ նշանակություն ունի։ Ինչպես հայտնի է, ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի՝ տնտեսական մեխանիզմի կատարելագործման մասին 1979 թ. հուլիսի 12-ի որոշմամբ նախատեսվել է արդյունաբերության արտադրական միավորումների և ձեռնարկությունների տնտեսական գործունեության արդյունքները գնահատել, ինչպես նաև դրանց տնտեսական խթանումը կազմակերպել, ելնելով, առաջին հերթին, կնքված պայմանագրերին (պատվերներին) համապատասխան արտադրանքի մատակարարման պլանների կատարումից։ Այս միջոցառումը կարևոր քայլ է տնտեսական կապերի ամրապնդման, արտադրանքի ծավալի, անվանացանկի և մատակարարումների պլանային առաջադրանքների կատարման գործում։ Այժմ արտադրանքի մատակարարման պարտավորությունների կատարման ցուցանիշը հանդես է գալիս որպես արտադրական միավորումների և ձեռնարկությունների գործունեության գնահատման հիմնական ելակետերից մեկը։ Հեռանկարում այս ցուցանիշը նորմատիվային զուտ արտադրանքի հետ միասին հիմք կծառայի արտադրության ծավալային կողմի բնութագրման համար։

1978 թ. հունվարից արտադրական միավորումների և ձեռնարկությունների ղեկավար աշխատողների պարգևատրման համար սահմանվել է նոր կարգ՝ հաշվի առնելով արտադրանքի մատակարարումների առաջադրանքների և պարտավորությունների կատարման աստիճանը։ Այդ նպատակով նախատեսվել է մատակարարման պլանի թերամատակարարման սահմանային տոկոս, որից ցածր լինելու դեպքում արտադրական միավորումների և ձեռնարկությունների ղեկավար աշխատողները զրկվում են տնտեսական գործունեության հիմնական արդյունքների համար պարգևից։ Անցած տարիների փորձը ցույց տվեց, որ ժողովրդական տնտեսության մեջ զգալիորեն ամրապնդվեց մատակարարումների պլանային կարգապահությունը, չնայած դեռևս քիչ չեն պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքերը։

Հեռանկարում պահանջվում է ըստ ամենայնի զարգացնել և ամրապնդել տնտեսական հաշվարկը։ Տնտեսաշվարկային հարաբերություններում նյութա-

1 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», Երևան, 1981, էջ 320, 322։

կան շահագրգռվածությունը սերտորեն կապված է նյութական պատասխանատվության հետ: Ժողովրդական տնտեսության մեջ բավարար ուղարկության է դարձվում նյութական շահագրգռվածության պրոբլեմին, մինչդեռ նյութական պատասխանատվության հարցերը վերջնականապես լուծված չեն: Ճիշտ է արտադրական միավորումները, ձեռնարկությունները պարտավորություն են կրում պլանային առաջադրանքների կատարման, նրանց տրամադրության տակ եղած նյութական, աշխատանքային և ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման, տնտեսական պայմանագրերով ստանձնած պարտավորությունների համար: Բայց, այդ պատասխանատվությունը շատ կողմերով թերի է, չափից դուրս ընդհանուր, քանի որ կոնկրետ մեղավորները գրեթե չեն բացահայտվում: Դեռևս տնտեսավարման տարերք մակարդակներում տնտեսական պատասխանատվության մեխանիզմը թույլ է գործում: Հատկապես շատ են խախտումները տնտեսական պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման ժամանակ: Բավական է նշել, որ մինչև օրս արտադրական միավորումների, ձեռնարկությունների մոտավորապես 60%-ն է լրիվ կատարում արտադրանքի մատակարարման պայմանները՝ կնքված պայմանագրերին և պատվեր-կարգագրերին համապատասխան: Պայմանագրային պատասխանատվության մեխանիզմն ամբողջությամբ վերցրած չի բավարարում տնտեսավարման արդի պահանջներին:

Պլանավորման բարելավման բնագավառում ժողովրդական տնտեսության առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է արտադրանքի արտադրության և բաշխման կենտրոնացված պլանավորման (խմբային, խոշորացված անվանացանկով) ճիշտ զուգակցումն արտադրական միավորումների ու ձեռնարկությունների ծավալուն անվանացանկով արտադրանքի թողարկման և մատակարարման պլանի հետ: Ներկայումս կենտրոնացված կարգով տարեկան պլաններում կազմվում են շուրջ 40 հազար անուն նյութական ռեսուրսների հաշվեկշիռներ և բաշխման պլաններ (խմբային խոշորացված անվանացանկով): Միաժամանակ նշենք, որ ժողովրդական տնտեսության մեջ թողարկվող արտադրանքի ծավալուն անվանացանկն այժմ անցնում է 20 միլիոն անվանումից, այդ թվում արդյունաբերության մեջ՝ 12 միլիոնից: Հետագայում այդ թիվը զգալիորեն կաճի:

Սոցիալիստական հասարակարգում ժողովրդական տնտեսության կենտրոնացված պլանային ղեկավարությունն օբյեկտիվ անհրաժեշտություն է: Դրա հետ միասին պլանավորումը, ինչպիսին էլ որ այն լինի՝ ընդգրկման տեսակետից, չի կարող ապահովել ժողովրդական տնտեսության կառավարման բոլոր ֆունկցիաները վերեւից-ներքև՝ ընդհուպ մինչև սկզբնական օղակը՝ ձեռնարկությունը: Արտադրական միավորումներին և ձեռնարկություններին իջեցվող արտադրանքի անվանացանկի պլանային առաջադրանքները խմբային և խոշորացված են: Այլ կերպ լինել չի կարող, քանի որ ծավալուն անվանացանկը հասնում է միլիոնների, խոշորացված անվանացանկով արտադրանքի թողարկման պլանավորումը միշտ չէ, որ հնարավորություն է տալիս ճիշտ հաշվի առնելու սպառողի պահանջները: Հաճախ արտադրական միավորումները և ձեռնարկությունները, կատարելով արտադրանքի ընդհանուր ծավալի և խոշորացված անվանացանկի պլանային առաջադրանքները, իրենց գործնավարտած են համարում: Մինչդեռ կոնկրետ սպառողների պահանջները լրիվ չեն բավարարվում:

Արտադրական միավորումներում և ձեռնարկություններում արտադրանքի թողարկման պլանը ծավալուն անվանացանկով հնարավոր է կազմել միայն տնտեսական պայմանագրեր կնքելուց հետո:

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՄՇՄ Մինիստրների խորհրդի՝ տնտեսական մեխանիզմի կատարելագործման մասին նշված որոշմամբ նախատեսվում է, որ արտադրական միավորումներն ու ձեռնարկություններն իրենց տարեկան պլաններում թողարկվող արտադրանքի ծավալուն անվանացանկը (տեսակա-

նին) որոշեն սպառողների պատվերներով՝ կնքված պայմանագրերին համապատասխան: Այստեղից բխում է այն հետևությունը, որ տնտեսական պայմանագրերը դառնում են պլանավորման կատարելագործման հզոր լծակ, որի հիման վրա պետք է հաստատվեն ժողովրդական տնտեսության զարգացման տարեկան և հնգամյա պլանները: Ներկայումս մատակարարման պայմանագրի գերը բարձրանում է հատկապես միավորումների և ձեռնարկությունների արտադրատնտեսական գործունեության վերջնական արդյունքների բաբլավման գործում:

Անցած տասնամյակում ապրանքադրամական հարաբերությունների զարգացման, տնտեսավարկային հարաբերությունների խորացման և հետևողական կիրառման, արդյունաբերության կառավարման կառուցվածքի կատարելագործման, արտադրական միավորումների և ձեռնարկությունների միջև ուղղակի տեղական տնտեսական կապերի ներդրման, ընդլայնման և հեռանկարային (հատկապես հնգամյա) պլանների դերի բարձրացման պայմաններում ապրանքների մատակարարման նախկին (1969 թ.) ցանոնադրությունը շատ հարցերում չէր ապահովում մատակարարների և գնորդների տնտեսավարկային շահերի միասնությունը, չէր բավարարում տնտեսավարման ներկայիս պահանջներին, ուստի անհրաժեշտություն էր զգացվում արմատապես վերանայելու այն ժողովրդական տնտեսության մեջ մատակարարների և գնորդների փոխհարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունն ալելի սրությամբ դրվեց ՍՄԿ Կենտկոմի և ՍՄՇ Մինիստրների խորհրդի նշված որոշմամբ: Նվնելով այս բոլորից, ՍՄՇ Մինիստրների խորհուրդը 1981 թ. փետրվարի 10-ին հաստատեց արտադրատեխնիկական նշանակման արտադրանքի և ժողովրդական սպառման ապրանքների մատակարարման նոր կանոնադրություն, որը գործողության մեջ մտավ 1981 թ. հուլիսի 1-ից:

Մատակարարման նոր կանոնադրությունը կարևոր միջոցառում է ՍՄԿ XXVI համագումարի և կուսակցության Կենտկոմի ու ՍՄՇ Մինիստրների խորհրդի՝ տնտեսական մեխանիզմի կատարելագործման մասին որոշումների կենսագործման բնագավառում: Կարգավորելով ապրանքների մատակարարման հարաբերությունները, նոր կանոնադրությունը կոչված է ծառայելու կոնկրետ արտադրատեսակների նկատմամբ ժողովրդական տնտեսության պահանջմունքների և բնակչության սպառողական պահանջարկի ալելի լրիվ բավարարման, վերջնական ժողովրդատնտեսական արդյունքների ձեռք բերման նպատակին: Այն հանվում է պետական կենտրոնացված պլանավորումը տեղերի ինքնուրույնության և նախաձեռնության ընդլայնման հետ ճիշտ զուգակցելու, մատակարարման առաջադիմական ձևերի ըստ ամենայնի զարգացման, մասնավորապես ուղղակի տեղական տնտեսական կապերի և երաշխավորված կոմպլեքսային մատակարարման, ժողովրդական տնտեսության մեջ երկարատև տնտեսական պայմանագրի դերի բարձրացման, արտադրության և մատակարարումների պլանների փոխկապակցման, պլանային և պայմանադրային կարգապահության ամրապնդման, տնտեսական հաշվարկի հետագա զարգացման, նյութական պատասխանատվության ուժեղացման, արդյունաբերության, նյութատեխնիկական մատակարարման և առևտրի կառավարման մարմինների տնտեսավարկային փոխհարաբերությունների ընդլայնման վրա: Այս փաստաթղթում նոր աստիճանի է բարձրացվում տնտեսական պայմանագրի և կապերի դերն ու նշանակությունը սոցիալիստական ձեռնարկությունների տնտեսավարկային հարաբերությունների սահմանման և իրացման ժամանակ: Տնտեսական պայմանագիրը հանդես է գալիս որպես ապրանքների մատակարարմանը մասնակցող կողմերի իրավունքները և պարտականությունները որոշող հիմնական փաստաթուղթ: Ոչ մի պլանային փաստաթղթում հնարավոր չէ ընդգրկել ապրանքների մատակարարման բոլոր մանրամասնությունները, հատկապես սահմանել ապրանքների ծավալուն տեսականին, ներկրման ժամկետները և այլն: Այդ բոլոր հարցերը լուծվում

են տնտեսական պայմանագրերի միջոցով, Տնտեսական մեխանիզմի կատարելագործման անհրաժեշտությունից ելնելով՝ մատակարարների և սպառողների փոխհարաբերությունների հիմքը դառնում է երկարաժամկետ պայմանագիրը:

Տնտեսական պայմանագիրը դիտվում է որպես կոնկրետ արտադրատեսակների նկատմամբ իրական պահանջմունքների արտահայտման, արտադրության բոլոր ցուցանիշների հիմնավորված մշակման, արտադրության և սպառման միջև ճիշտ համամասնությունների սահմանման անհրաժեշտ պայման: Փաստորեն այն դառնում է ժողովրդական տնտեսության բազմակողմանի պահանջմունքների ճիշտ որոշման, պլանային առաջադրանքների հիմնավորված սահմանման և ձեռնարկությունների տնտեսական գործունեությունը վերջնական արդյունքներով գնահատելու կարևոր փաստաթուղթ:

Ապրանքների մատակարարման նոր կանոնադրությամբ անհամեմատ ուժեղացվել է պետական, պլանային և պայմանագրային կարգապահության խախտման պատժադրականատվությունը: Նախ, դա արտահայտվում է ապրանքների ուղացումով մատակարարման և թերամատակարարման դեպքերում նախատեսվող միասնական սանկցիաների կիրառումով՝ 8% թերամատակարարված արտադրատեսակի կազմի նշանակման արտադրանքի արժեքից և 5% ժամանակին չմատակարարված և թերամատակարարված ժողովրդական սպառման ապրանքների արժեքից (մանկական տեսակներու դեպքում՝ 10%)²: Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման թերացումը համարվում է պետական կարգապահության խախտում և հանգեցնում գույքային պատասխանատվության: Պայմանագրային պարտավորությունների խախտման համար նախատեսվող սանկցիաների կիրառումը դառնում է կողմերի պարտականությունը: Դրանք իրականացվում են պարտադիր կարգով՝ առանց փոխադարձ զիջումների: Պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքում տուժող կողմը ոչ միայն իրավունք ունի տնտեսական սանկցիա ներկայացնելու կամ ինքնակամ հրաժարվելու դրանից, այլև պարտավոր է այդ իրադրոժելու: Գործնականում մինչև օրս էլ դեռևս կան դեպքեր, երբ արտադրական միավորումները, ձեռնարկությունները, նյութատեսակների կազմի նշանակման մատակարարման և առևտրական կազմակերպությունները դիմում են փոխադարձ համաձայնության և թերացող մատակարարների նկատմամբ տնտեսական սանկցիաները լրիվ չեն կիրառում: Այս կապակցությամբ նոր կանոնադրությունը նախատեսում է, որ արտադրանքի թերամատակարարման կամ նշված ժամկետին չմատակարարելու ժամանակ գնորդի կողմից մատակարարին համապատասխան տուժանքի (տուգանք, տույժ) վճարման պահանջ չներկայացնելու դեպքում տուժանքի գումարը ենթակա է մոտեցավորման՝ միութենական բյուջե: Միաժամանակ, արբիտրաժի մարմինները, եթե պարզեն, որ տուժանք ներկայացնելուց գնորդի հրաժարվելն անհիմն է եղել, ապա վերջինս այն վճարելու է՝ միութենական բյուջե մոտեցավորվող թերամատակարարված արտադրանքի արժեքի 2%-ի չափով գումար:

Արտադրական միավորումների և ձեռնարկությունների համաչափ աշխատանքն առաջին հերթին կախված է հումքի, նյութերի, կոմպլեկտավորվող առարկաների և այլի անընդմեջ, հստակ մատակարարումներից: Նոր կանոնադրությամբ սահմանվում է մատակարարումների առաջնայնություն (հերթականություն) արտադրության միջոցների նկատմամբ և արտադրանքի առաջման (տեղ հասցնելու) գրաֆիկի համաձայնեցում. ընդ որում, նախատեսվում է արտադրանքի մատակարարումն իրականացնել ամեն ամիս՝ հավասար մասնակներով: Արտադրանքի բեռնման համաձայնեցված գրաֆիկի

² «Положение о поставках продукции производственно-технического назначения. Положение о поставках товаров народного потребления», М., 1981, с. 39, 85.

խախտման դեպքում մատակարարը գնորդին վճարում է տուգանք՝ ժամանակին չբեռնված արտադրանքի արժեքի մեկ տոկոսի չափով: Նշված տուգանքը վճարվում է արտադրանքի մատակարարման ժամկետի խախտման կամ թերամատակարարման համար վճարվող տուգանքից անկախ: Արտադրանքի համաչափ մատակարարման այս կարգի սահմանումը հնարավորություն կտա արտադրություն և շրջանառության ընթացքն ավելի կայուն ու կանոնավոր դարձնել:

Հարկ է նշել, որ արտադրության միջոցների և ժողովրդական սպառման ապրանքների մատակարարման պարտավորությունների խախտման ժամանակ կիրառվող տնտեսական սանկցիաների չափերը տարբեր են: Այսպես, ինչպես տեսանք, արտադրության միջոցների թերամատակարարման դեպքում ձեռնարկությունը պետք է վճարի տուգանք՝ արտադրանքի արժեքի 8%-ի չափով, իսկ ժողովրդական սպառման ապրանքների թերամատակարարման համար՝ 5% և այլն: Այսինքն, միևնույն խախտման համար նախատեսվում են տարբեր տոկոսաչափեր: Մեր կարծիքով, տնտեսապես ճիշտ կլիներ սանկցիաների կիրառման ժամանակ միասնական մոտեցում ապահովել, անկախ այն հանգամանքից, թե ինչ տեսակի ապրանքի հետ գործ ունենք, քանի որ երկու դեպքում էլ շոշափվում են սոցիալիստական տնտեսաշարժարկային ձեռնարկությունների շահերը: Ապրանքադրամական հարաբերությունների և տնտեսական հաշվարկի զարգացման ներկա փուլում արժեքային ցուցանիշների ճիշտ օգտագործման նախապայմանը հավասար տնտեսական պայմանների ապահովումն է: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ արտադրության միջոցների արտադրությամբ զբաղվող միավորումների ու ձեռնարկությունների արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ զգալի բաժին են կազմում ժողովրդական սպառման ապրանքները, հատկապես կոլտուր-կենցաղային և տնտեսական գործածության առարկաները: Այս պայմաններում միևնույն խախտման համար սանկցիաների տարբեր տոկոսաչափերի կիրառումը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում հաշվարկների կատարման և բողոքարկումների ներկայացման ժամանակ: Այստեղ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ մատակարարումների պլանային առաջադրանքների թերամատակարարման սահմանային տոկոսը հավասարապես տարածվում է միավորման ու ձեռնարկության թողարկած և մատակարարած ամբողջ արտադրանքի վրա: Այն նախատեսում է ձեռնարկության ղեկավար աշխատողների հավասար նյութական պատասխանատվություն, ինչպես արտադրության միջոցների, այնպես էլ ժողովրդական սպառման ապրանքների մատակարարման պայմանագրային պարտավորությունների կատարման համար:

Մատակարարման նոր կանոնադրությունն առանձնահատուկ նշանակություն է տալիս ապրանքների պատշաճ որակի ապահովմանը: Ապրանքների անհրաժեշտ որակի ապահովման հարցը դառնում է կողմերի փոխհարաբերությունների սահմանման կարևոր, էական պայմաններից մեկը: Կանոնադրության մեջ առանձնացվում է հատուկ բաժին՝ նվիրված ապրանքների որակին և կոմպլեկտայնությանը: Ապրանքների պատշաճ որակի ապահովման նպատակին են ծառայում մի շարք նոր լուծումներ: Երկարատև պայմանագիր կնքելիս կողմերը պետք է հատուկ ուշադրություն դարձնեն ապրանքների տեսական ու ընդլայնման ու նորացման, որակի և տեխնիկատնտեսական ցուցանիշների բարձրացման վրա, տեխնիկական օգնություն ցույց տան նոր արտադրատեսակների պատրաստմանն ու շահագործմանը, առաջադիմական տարալի, փաթեթավորման, փոխադրման, պահպանման և այլ աշխատանքների ներդրմանն ու օգտագործմանը: Տնտեսական պայմանագրում պարտադիր նշվում է ապրանքի որակը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեսակայնությունն ու կոմպլեկտայնությունը: Մատակարարվող ապրանքներն իրենց որակով պետք է համապատասխանեն ստանդարտներին, տեխնիկական պայմաններին, նմուշներին: Պայմանագրում

պարտագիր կարգով նշվում են դրանց համարները, ինդեքսները, իսկ նմուշների հիման վրա մատակարարելիս՝ վերջիններիս հաստատման թվականը և կազմակերպության անվանումը:

Խոտանված ապրանքների մատակարարման դեպքում արտադրողը (մատակարարը) գնորդին տուգանք է վճարում խոտանված ապրանքի արժեքի 20%-ի չափով: Բացի այդ, խոտանված ապրանքների իրացումից ստացված շահույթը մուտք է արվում միութենական բյուջե և չի մտնում ձեռնարկության փաստացի տվյալների մեջ՝ որպես արտադրանքի իրացման և շահույթի պլանային առաջադրանքների կատարում: Խստացված մոտեցում է ցուցաբերվում հատկապես որակի պետական նշան ունեցող արտադրանքի մատակարարման ժամանակ: Այդպիսի ապրանքների խոտանման դեպքում մատակարարը գնորդին վճարում է տուգանք՝ խոտանված ապրանքի արժեքի 30%-ի չափով:

Մատակարարների և գնորդների տնտեսաշվարկային շահերի ապահովումը ենթադրում է պատճառած վնասի լրիվ փոխհատուցում: Մատակարարման նոր կանոնադրությունը սահմանում է, որ անկախ վճարված տուժանքից պայմանագիրը խախտող կողմը պարտավոր է փոխհատուցել մյուս կողմին դրա հետևանքով պատճառած վնասն այն մասով, որը չի ծածկվել տուժանքով, իսկ ոչ պատշաճ որակի կամ ոչ կոմպլեկտային արտադրանքի մատակարարման դեպքում պետք է փոխհատուցվի պատճառած վնասը՝ անկախ տուժանքի վճարումից: Պատճառած վնասի փոխհատուցման հարցը մինչև ախօր էլ վիճելի է և շոտափույթ լուծման կարիք ունի: Որպես կանոն տուժող կողմը չի կարողանում ապացուցել վնասի կոնկրետ չափը, իսկ արբիտրաժի մարմինները, իրենց հերթին, չեն կարողանում հայցին անհրաժեշտ հիմնավորում տալ: Սոցիալիստական միավորումների և ձեռնարկությունների տնտեսաշվարկային շահերի ապահովումը պահանջում է ամբողջությամբ փոխհատուցել պատճառած վնասը, այլ կերպ հնարավոր չէ անցում կատարել լրիվ տնտեսական հաշվարկի: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պայմանագրային պարտավորությունների խախտման համար կիրառվող բոլոր սանկցիաներից փոխհատուցվում է պատճառած վնասի աննշան մասը:

Տնտեսական սանկցիաների կիրառման պրոցեսը բավականին բարդ է և տեղական: Լավագույն դեպքում հայցը վերջնական լուծում է ստանում պայմանագրի խախտման պահից 5—6 ամիս հետո, որը, ինքնրատինքյան հասկանալի է, անպարտաճանաչ մատակարարների նկատմամբ թուլացնում է վերահսկողությունը: Տնտեսական սանկցիաների կիրառման արդյունավետության բարձրացումը պահանջում է արագացնել այդ պրոցեսը: Տնտեսական սանկցիաների կիրառումն անհրաժեշտ է սերտորեն կապել ղեկավար աշխատողների նյութական պատասխանատվության բարձրացման հետ, հակառակ պարագայում ցանկալի արդյունքի ապահովումն անհնարին է դառնում:

Նյութական պատասխանատվությունը գրեթե լրիվ բացակայում է կառավարման մարմինների (ՍՍՀՄ պետպլան, մինիստրություններ, գերատեսչություններ և այլն) հետ ունեցած փոխհարաբերություններում: Տնտեսաշվարկային հարաբերությունների զարգացման շահերը պահանջում են կառավարման մարմինների նյութական պատասխանատվության սահմանում՝ ընդունած սխալ որոշումների դեպքում: Այս խնդիրը կարելի է լուծել՝ մինիստրություններ, գերատեսչություններն աստիճանաբար փոխադրելով տնտեսական հաշվարկի և դրանց փոխհարաբերությունները միավորումների, ձեռնարկությունների հետ կառուցել տնտեսական պատասխանատվության սկզբունքի հիման վրա:

Կանոնադրության մեջ հստակ ձևակերպում չի ստացել ապրանքների մատակարարման պլանային ակտերն արտադրության սկզբնական օղակին՝ արտադրական միավորումներին ու ձեռնարկություններին, հասցնելու սահմանված կարգը: Մի դեպքում ուղղակի գրվում է, որ ապրանքների մատակարարման պլանային ակտերը մատակարարներին՝ արտադրական միավորումներին ու ձեռնարկություններին, պետք է տրվեն վերջիններիս համար

սահմանված արտադրության պլաններին համապատասխան, մյուս դեպքում՝ պլանային ակտերը կարող են տրվել մինչ արտադրանքի արտադրության և բաշխման պլանների հաստատվելը (պլանների նախագծերի հիման վրա), անհրաժեշտության դեպքում պլանների հաստատումից հետո դրանց հետագա ճշտմամբ: Գործնականում նման մոտեցումը, մեր կարծիքով, դարձյալ կհանգեցնի որոշակի դժվարությունների ու բարդությունների: Նորից հարկ կլինի տարվա ընթացքում վերանայելու արտադրության պլանային առաջադրանքները:

Սոցիալիստական տնտեսաշարժարկային միավորումների ու ձեռնարկությունների ֆինանսատնտեսական գործունեության վրա որոշակի ազդեցություն են թողնում ստացված և վճարված տուժանքները: Գործնականում հաճախ ստացված տուժանքների գումարը համեմատության մեջ են դնում վճարվածի հետ և առաջինի գերակշռության դեպքում միավորման կամ ձեռնարկության գործունեությունը բավարար համարում: Մեր կարծիքով, ձեռնարկության գործունեության գնահատման հարցում նման մոտեցումը հախուռն ու արհեստական է, դուրկ տնտեսական բովանդակությունից, քանի որ տուժանքների առաջացման աղբյուրներն ու պատճառները տարբեր են և բոլոր դեպքերում յուրաքանչյուր հոգվածի գնահատման հարցն առանձին քննարկման առարկա պետք է դարձվի: Հավանաբար, տնտեսագետ ճիշտ կլինի, եթե ստացված ու վճարված տնտեսական սանկցիաների գումարի դրական տարբերությունն ամբողջությամբ վերցրած թողնվեր ձեռնարկության սրամադրության տակ, նրա մի մասն անպայման հատկացնելով նյութական խթանման ֆոնդին և ծառայեցնելով մատակարարման գործի բարելավմանը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ձեռնարկությանը պատճառած վնասը լրիվ չփոխհատուցելիս դժվարություններ են առաջանում նաև տնտեսական գործունեության գնահատման, ընդհանրապես արդյունավետության որոշման ժամանակ:

Սոցիալիստական ձեռնարկություններն, ապրանքների իրացման ընթացքում մտնելով տնտեսական փոխհարաբերությունների մեջ, մի դեպքում հանդես են գալիս որպես մատակարարներ, մյուս դեպքում՝ գնորդներ կամ արտադրողներ և սպառողներ, չնայած որ այս բաժանումը պայմանականորեն հարաբերական բնույթ է կրում: Միևնույն ձեռնարկությունը չի կարող մշտապես հանդես գալ միայն մատակարարի կամ գնորդի դերում: Դրանք հաջորդում են միմյանց: Ելնելով դրանից, մեր կարծիքով, չի կարելի համաձայնվել տնտեսագիտական գրականության մեջ եղած այն տեսակետների հետ, որ նշված փոխհարաբերություններում առավելությունը պետք է տալ գնորդին (սպառողին) կամ, որ անհրաժեշտ է վերջ տալ մատակարարի անհարկի արտոնություններին: Մեզ թվում է, որ ձեռնարկությունն այն, ինչ տնտեսագետ շահում է որպես մատակարար, կորցնում է գնորդի դերում հանդես գալիս: Պատճառն այստեղ պետք է փնտրել ժողովրդական տնտեսության պլանավորման, բաշխման, կառավարման, տնտեսական պատասխանատվության բնագավառներում տեղ գտած թերություններով: Տնտեսական մեխանիզմի կատարելագործումը պետք է նպատակամղված լինի առաջին հերթին այն բանին, որպեսզի հավասար տնտեսական պայմաններ ստեղծվի պայմանագրի մասնակիցների համար, թույլ չտալով դրանցից որևէ մեկին՝ հասնելու անհիմն առավելության:

Այսպիսով, ապրանքների մատակարարման նոր կանոնադրությունը տնտեսական մեխանիզմի կատարելագործմանն ուղղված կարևոր, գործնական միջոցառումներից է: Այն տնտեսական, իրավական պայմաններ է ստեղծում ապահովելու արտադրողների և սպառողների, մատակարարների ու գնորդների տնտեսական շահերի միասնությունը և փոխադարձ պատասխանատվություն սահմանելու պայմանագրային պարտավորությունների խախտման յուրաքանչյուր դեպքի համար այն հաշվով, որպեսզի լրիվ բավարարվի

ժողովրդական տնտեսության և բնակչության պահանջներն անհրաժեշտ քանակի, տեսականու և որակի ապրանքներով:

НОВОЕ ПОЛОЖЕНИЕ О ПОСТАВКАХ И УКРЕПЛЕНИЕ ХОЗЯЙСТВЕННЫХ СВЯЗЕЙ

РАДИК МИРЗОЯН

Резюме

На XXVI съезде КПСС поставлена задача усилить экономическую ответственность и заинтересованность в выполнении плановых заданий и договорных обязательств, применении принципов хозрасчета по существу.

За прошедшее десятилетие в результате развития товарно-денежных отношений, углубления и последовательного применения хозрасчетных отношений, совершенствования структуры управления промышленностью, внедрения и расширения прямых длительных связей и повышения роли перспективных, особенно пятилетних планов, прежнее положение о поставках товаров во многих вопросах не обеспечивало единства хозрасчетных интересов поставщиков и потребителей, не соответствовало современным требованиям хозяйствования.

Анализ нового (1981 г.) положения о поставках товаров показывает, что несравненно усилилась ответственность за нарушение государственной плановой и договорной дисциплины. На современном этапе развития товарно-денежных отношений, хозяйственного расчета предпосылкой правильного использования стоимостных показателей является обеспечение равных условий хозяйствования. На практике применение разных процентов санкций за одно и то же нарушение создает дополнительные трудности во время расчетов и предъявления претензий. Поэтому, вероятно, экономически будет более правильно обеспечить единый подход в применении санкций независимо от того, поставляется ли продукция производственно-технического назначения или товары народного потребления.